ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 հուլիսի 2023թ. թիվ 295-Ա

Գ. ԱՍՐՅԱՆԻՆ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԱՇՆՈՒԹՅԱՆ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՄԵԿՆԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ
ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2335-Ն որոշման 1-ին հավելվածով սահմանված կարգի 7-րդ կետով, 2018 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 1230-Ն որոշմամբ սահմանված կարգի 9-րդ և 12-րդ կետերով, հիմք ընդունելով ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալի 2023 թվականի հունիսի 26-ի N 1101/33466-23 գրությունը և միջազգային համագործակցության գերմանական միության և Արբերլանդ համայնքային դպրոցի 2023 թվականի հունիսի 16-ի հրավերը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Լոռու մարզպետի տեղակալ Գոռ Ասրյանին հայկական պատվիրակության կազմում ս/թ հուլիսի 10-ից 14-ը ներառյալ թույլատրել մասնակցելու Գերմանիայի Ռեգեն երկրամասային շրջան կատարվելիք ուսումնական այցին:

2. Գ.Ասրյանի՝ Գերմանիայի Դաշնության Հանրապետություն մեկնման հետ կապված ծախսերը կատարվելու են միջազգային համագործակցության գերմանական միության և Արբերլանդ համայնքային դպրոցի կողմից:

3. Գ.Ասրյանին՝ վերադառնալուց և աշխատանքի ներկայանալուց հետո՝ երեք աշխատանքային օրվա ընթացքում այցի արդյունքների մասին հաշվետվություն ներկայացնել Լոռու մարզպետին և ՀՀ արտաքին գործերի նախարարություն:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

06/07/23

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2023թ. հուլիսի 6
ք.Վանաձոր